

### **Հարց**

**2017թ. փետրվար ամսին գործադրուի ընդունած հրամանով հաշվարկվում են 2016թ. փարեկան արդյունքներով աշխատանքային պարտականությունները գերազանց կատարած աշխատողներին պարգևատրման գումարներ, որոնք վճարվում են աշխատողներին մարտ ամսին: Հարկվող եկամտի որոշման ժամանակ ի՞նչ մեթոդով պետք է առաջնորդվել և ո՞ր ամսվա հաշվարկում պետք է արտացոլել առաջացած եկամտային հարկի պարտավորությունը:**

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն, եթե ընթացիկ ամսում գործատուի կողմից ընդունած իրավական ակտով հաշվարկվում է այդ ամսվան նախորդող ժամանակահատվածներում աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության համար պարգևատրման գումարներ, ապա այդ գումարներից եկամտային հարկը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ընթացիկ ամսվա աշխատավարձի գումարը՝ միասնականացված կարգով, և արտացոլվում է այդ (ընթացիկ) ամսվա՝ տվյալ պարագայում փետրվար ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:

### **Հարց**

**Կազմակերպության կողմից կազմակերպված մրցույթի արդյունքներով հաղթողներին տրամադրվել են դրամական պարգևներ: Արդյո՞ք, հարկային գործակալը պետք է այդ գումարներից հաշվարկի և բյուջե փոխանցի եկամտային հարկ:**

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ մրցույթներում և մրցություններում ստացված դրամական մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում տասը հազար դրամը չգերազանցող չափով, համարվում է նվազեցվող եկամուտ: Գերազանցող մասը ենթակա է հարկման օրենքով սահմանված կարգով:

### **Հարց**

**Աշխատանքից ազատված վարձու աշխատողին վճարվել է արձակման նպաստ: Այդ գումարը ներառվո՞ւմ է, արդյոք, եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:**

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ աշխատողին աշխատանքից ազատման դեպքում ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված չափերով վճարվող արձակման նպաստի գումարը համարվում է որպես

նվազեցվող եկամուտ և չի ներառվում եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:

### **Հարց**

**Աշխատողին վճարվող ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը ո՞ր ամսվա եկամտային հարկի հաշվարկում պետք է արտացոլել:**

### **Պատասխան**

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարները արտացոլվում են այն ամսվա եկամտային հարկի հաշվարկում, որ ամսում կատարվել է վճարումը: Օրինակ՝ վարձու աշխատողը մարտի 20-25-ը գտնվում է անաշխատունակ վիճակում և անաշխատունակության նպաստը վճարվում է ապրիլի 1-ին, ապա անաշխատունակության նպաստը ներառվում է ապրիլ ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:

### **Հարց**

**Կազմակերպությունը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձից ձեռք է բերել գյուղատնտեսական նշանակության հողամաս, որի դիմաց կատարել է կանխիկ վճարում: «Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կիրառվում են, արդյո՞ք:**

### **Պատասխան**

«Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները չեն տարածվում ֆիզիկական անձանց կատարվող՝ նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող վճարումների վրա:

### **Հարց**

**Մեկ աշխատատեղով ավտոտեխսպասարկման կետի կազմակերպման գործունեություն իրականացնելիս պարտադիր է, արդյո՞ք, ՀԴՄ-ի տեղադրումը:**

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «դ<sup>3</sup>» կետի համաձայն՝ մեկ աշխատատեղով ավտոտեխսպասարկման կետի կազմակերպման գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի տեղադրումը պարտադիր է 2018 թվականի հունվարի 1-ից:

### **Հարց**

**Նորածին որդեգրած վարձու աշխատողին տրվում է, արդյո՞ք, մայրության նպաստ:**

## **Պատասխան**

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին»  
ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորածին որդեգրած կամ նորածնի  
խնամակալ նշանակված վարձու աշխատողին մայրության նպաստ վճարվում է միայն  
ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:  
Նպաստը վճարվում է որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև  
նորածնի 70 օրական դառնալը (երկու և ավելի նորածին որդեգրած կամ խնամակալ  
նշանակված անձին՝ մինչև 110 օրական դառնալը) ժամանակահատվածի օրացուցային  
օրերի համար: